

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՅՐԵՐԻՑ

I

Թուրքերի յարձակումը Դարալազեազի հայերի վրայ

Մայիսի 15 ին Զուլ, Զրախլու, Դամբչիլար, Մարաթուղ, Թերփ, Քոչըեկ, Լէյլիկաչան, Գիւմուշիանայ, Աղքեանդ և Խօտիսու գիւղերի թուրքերը յարձակուեցին Գնդեվազ գիւղի վրայ, Այդ ժամանակ Գնդեվազու հասարակութեան տանուտէր Ալի Մաֆարալի օղլին մի կողմից իմաց է տալիս Գիւմուշիանայ գիւղի թուրքերին (որոնք իր ազգականներն են), թէ Զուլի գիւղերի թուրքերը յարձակում են Գնդեվազի վրայ, դուք էլ եկէք, մասնակցեցէք, միւս կողմից էր բարեկամ ձևանալով Գնդեվազցիներին հաւար է բերում թէ թուրքերը ձեր տաւարու ոչխարը քշեցին տարան. Գնդեվազի հայերը դուրս ելնելով գիւղից, հանդիպում են գիւմուշիանեցիներին, տանուտէրի առաջնորդութեամբ. Այդ ժամանակ տանուտէր Ալին ասում է գնդեվազցիներին. «Ուրովհետու ձեր գիւղի ներքեցի, հարաւային կողմից, միացեալ թուրքերը գալիսեն ձեզ կողապտելու, այս պատճառով ես գիւմուշիանեցիներին բերում եմ որ ձեզ օգնեն»:

Հաւատալով սրան, գնդեվազի հայերը խառնուելով գիւղուշանեցիների հետ գիրք են մտնում միասին շինական կառավարութեան մօտ ու սկսում են կոռւել ներքեցի յարձակուող թուրք խուժանի հետ: Կէս ժամ կոռւելուց յետոյ Գնդեվազի հայերը սպանում են գնդեվազի թերփեցի Բայրամալի Բէկլար օղլուն ու վիրաւորում են մի թարփեցու և մի ջուլեցու: Գիւղուշանեցիները, տեսնելով որ հայերը յաղթողեն հանդիսանում, յարձակում են նրանց վրայ, որոնց օգնութիւն էին ցոյց տալիս երկու ստրածնիկներ. Ալեքսանը (հայ) և Սիմոնը (ոռու): Այդ ժամանակ գիւմուշիանեցի Ամրահ Մամադ ալի օղլին, տանուտէր Ալիի եղբօր որդին, և լէյլիկանանցի Ղասմ Մօլլայ Շահ Յուսէն օղլին պինդ բռնում են ստրածնիկ Սիմոնին,

որպէսզի հրացանը խլեն ձեռքից, միւս ստրաժնիկ Ալեքսանը, երեք անգամ հրամայում է նրանց բաց թողնել իր ընկեր կազակին և երր նրանք չեն լսում, գնդակահար անելով սպանում է Սիմոնին բանողներից մէկին, Ամրահ Մամադալի օղլուն: Այդ ժամանակ բոլոր գիւմուշխաննեցիները շրջապատում են ստրաժնիկներին որ սպանեն, բայց վրջիններու փախչում են ուրիշ գիրք մտնում, որի ժամանակ գնդեվազցի Ամրասլան Շուրքուր օղլին գնդակով վիրատորում է ստրաժնիկ Ալեքսանին, իսկ գիւմուշխաննեցի Ալիլ Ռահիմ օղլին սպանում է Ալեքսանի ձին: Ստրաժնիկ Սիմոնը իր վիրաւոր ընկերին փախցնում է կուշչի հայարնակ գիւղը փրկելով նրան մահից: Այսպէս, շնորհիւ տանուտէր Ալիլի խաբէութեան, մի կողմից գիւմուշխաննեցի թուրքերը, միւս կողմից մնացող գիւղերի թուրքերը յաղթելով հայերին, քշում տանում են նրանց 1200 հատ ոչխարը, 600 տաւար, 80 ձի և ջորի և 100 էշ, որոնց բոլորն էլ հաւասար կերպով բաժանում են իրանց մէջ: Զբաւականանալով սրանով, թուրքերը մտնում են գիւղը ու կողոպտում ինչ որ կայ գնդեվազցի հայերի տներում, ջարդելով դռները, սպանելով միւնոյն ժամանակ հարկ հաւաքող Մնացական Ալլահվերդեանին, տանում են նրա տանից 500 ր. արքանական հարկը և հասրական ծախըք: Գնդեվազցի հայերը իրանց ընտանիքը լըցնում են եկեղեցին և այնտեղ ապաստանելով ութին օր, փրկում իրանց կեանքը մինչև դաւառապետ պ. Զերքեզովի գալը, մնադուելով այդ ժամանակ գառան մսով, որոնետև թէ հացը և թէ միւս ուտելիքներ սրբել տարել էին թուրքերը: Գնդեվազցի հայերն ունեին ութ հրացաններ, և եթէ չխարուէին տանուտէր Ալիլից և գիւմուշխաննեցիներին թոյլ չտային իրանց մէջ մըտնելու, չէին թողնիլ որ ոչ ստրաժնիկ Ալեքսանը վիրաւորուէր և ոչ էլ դիրքերը կը տային թուրքերին: Թուրքերը կողոպտեցին նաև շինական կառավարութեան կահ կարասիքը, բոլոր գըրքերը, ծակծկոտելով նոյնակս կայսրի պատկերը:

Գնդեվազցիների կորուստը համնումէ 50,000 բուրլու:

Այդ երկու օրը Նախճաւանի գաւառի թուրքերը միանալով Դարալազեազի թուրքերի հետ, յարձակուեցին Մարտիրոս գիւղի հովիւնների վրայ: Գիւղի առջև սկսեց փոխադարձ հրացանաձգութիւնը, հայերը չկարողանալով դիմադրել թիւրքերի հարիւր անգամ աւելի բազմութեան, տեղի տուեցին նրանց, որոնք քշեցին տարան մարտիրոսցիների 1000 գլուխ ոչխարը և 200 տաւարը:

17-ն Մայիսի. Այար գիւղից մէկ ու կէս վերաս հեռաւորութեան վրայ, «Գուաւի ձորում», Ղուրբանքեասլան, Ղուրդ-

ղուլաղ և Զէյթա - Զօմախ գիւղի բնակիչները յարձակուեցին այսացիների ոչսարի հօտերի վրայ, սպանեցին երկու քուրդ հովհաներին և հօտերի վերայ հսկող պահակ Խաչառուր Յարութինեանին, տանելով հօտից 270 հայո ոչսարներ։ Այսացիները տեսնելով, որ չեն կարող դիմադրել այդ չորս գիւղին, սպանուածի գիակը յանձնելով հողին, տեղափոխուեցին Մալիշկեայ։ Միւս օրը, ամսի 18-ն, յիշուած թուրք գիւղի բնակիչները յարձակուեցին տեղափոխուող այսացիների վրայ ու ոկսեցին հրացաններ արձակել նրանց վրայ։ Այդ ժամանակ վիրաւորեցին դաշոյնով այսարցի Ղազար Գէորգեանին ու ձգեցին Արքաչայ գետը։ Զբաւականանալով սրանով գիշերը կողոպտեցին գիւղը և տարան այն բոլոր ապրանքը այսացիների, որ չկարողացան նրանք վերցնել հետաները Այսարց Մալիշկեա տեղափոխուելիս։ Թուրքերը կողոպտեցին այսացիների 10,000 բուրլու չափ կարողութիւնը, հաշուելով սրա հետ և կողոպտուած եկեղեցու իրեն ու սրբազն անօթները։

3-ն Յունիսի, առաւօտը շուտով պահակները դիրքերից հաւար կանչեցին թէ ահագին բազմութիւն թուրքերի գալիս է յարձակուելու Ելփին գիւղի վրայ։ գիւղացի երիտասարդները իսկոյն եղան քաշուեցին դիրքերն։ Այդ ժամանակ հիւսիսայն կողմից Ելփինցիներին շրջապատեցին Աղքիլիսա, Գենալու, Ալմալու և Հօրս գիւղերի թուրքերը Այրիշայի քրդերի հետ, իսկ արևմտեան կողմից շրջապատեցին Սրբաբաս, Քեօմուրլու և Զիվա գիւղի թուրքերը Դաշխարման և Քեալաֆա Աղըլ գիւղերի քրդերը, միացած Երևանի գաւառի թուրքերի հետ։ Կուրը տեսեց մօտաւորապէս 8 ժամ։ Ելփինցիներին օգնում էին Արդիշուի պոստի 4 կազակները, սակայն անկարող եղան դիմադրել այսքան ոյժի դեմ և, տեսնելով մօտալուտ վտանգը, Ղոչըլդայու հասարակութեան տանուտէր Ղամբար Ղոչալի օղլին խորհուրդ տուեց Ելփինցիներին փախչել դէպի իրա բնակած Ղոչղայ թուրք գիւղը։ Հայերը կատարեցին ու մինչդեռ շարունակուում էր փախուստը, Ելփինցի քաջ երիտասարդները յուսահատ կոիւ էին մղում թուրքերի դէմ իրանց բռնած դիրքերից։ Այդ ժամանակ Ելփինցի թումաս տէր Անդրէասեանը, որ փամփուշտ էր տանում դիրքերի մէջ կուռող երիտասարդներին, այնտեղից վերադառնալիս սպանուեց գիւղի մէջ թուրքերի գնդակով։ միևնոյն ժամանակ սպանուեց դիրքի մէջ Մնացական Եղիայեանը, փոխադարձ հրացանաձգութեան միջոցին ալմալուցի Մէյիդ Միր Մոստաֆա Մէիդ Հասան օղլու ձեռքով։ Ամենից երկար և յուսահատ կռւում էր Յովհանէս Եղիայեանը, որը պահպանում էր երկու ընկնող դիակներին և իր ծերունի հօրը

կոյր Եղիային, որը մտած էր եկեղեցի իրան փրկելու մտքով։ Վերջապէս թուրքերը խուժեցին գիւղը, սկսուեց անողորժ կողոպուտը. այդ ժամանակ ալմալուցի Սէյխտ Միր Հաշիմ Սէյխտ Ահմադ օղլին վիրաւորեց, դաշյնով ելփինցի Արքահամ Յարութիւնեանին, որը նոյնական վախճանուեց։ Թուրքերի կողմից սպանուեցին ութ հոգի և վիրաւորուեցին 10 հոգի։ Գիւղում կային միայն հինգ հատ բերդանի սիստեմի հրացաններ, որոնցով կուռաւ էին Եղիայեան Յովհաննէսը, Ենոք Աստառածառեանը, Թէոս Տէր Անդրիասեանը, Արշակ Տէր Անդրէասեանը, Սիրոս Սարգսեանը և Զաքար Պողոսիանը. ստրաժնիկներից երկուսը թուրքեր էին, որոնք հրացան չէին արծակում իրանց արինակից թուրքերի վերայ, Թուրքերը կողոպտելով զիւղը չբաւականացան սրանով. նրանք անիմայ կողոպտեցին և եկեղեցին. գիւղից հեռանալիս էլ քիշեցին տարան ելփինցիների 2000 հատ ոչխար և եօթն հարիւր հատ տաւարը։ Ելփինցիները երեք օր իրանց ընտանիքով մնացին Ղոչըլզա գիւղում, մինչև որ եկաւ գաւառակիս պրիստաւը ու կրկին վերադարձրեց նրանց իրանց բնակութեան տեղը։

Խլած ոչխարի մեծ մասը երկար ժամանակ գտնւում էր հորսեցի Ղըրալի Հասան ալի օղլու և Բահլուլի մօտ։

Հէնց մի մեծ տանից, այն Է՛ Օհանէս Եղիայեանի տանից, տարել են 400 հատ ոչխար, 80 հատ տաւար և չորս ձիեր։ Հնդհանուր գումարը վնասի որոշուած է 56,666 ը.

5-ն Յունիսի, Զուլ, Ախտա, Գիօմուդ, Դիաբուլ և Դարաքեանդ գիւղերի թուրքերը միանալով Նախճաւանի գաւառի թուրքերի հետ, զիւղից մի վերստ հեռաւորութեան վերայ յարձակուելով Մարտիրոս գիւղի հովիւների վերայ սկսեցին խել սպանալիքներով նրանց հօտերը։ Այդ ժամանակ 50-60 հոգի մարտիրոսցի երիտասարդներ զինուելով ելան նրանց դէմ. սկսեց փոխադարձ հրացանաձգութիւնը երկու կողմերի մէջ։ Թուրքերի մի մասը սկսեց կռուել մարտիրոսցիների հետ, իսկ միւս մասը քեկ նրանց տաւար ու ոչխարը։ Մարտիրոսցիները հետևեցին նրանց մինչև Եաղիւրտ, երեք վերստաչափ հեռաւորութեամբ։ Այստեղ թուրքերը գնդակով խփեցին մարտիրոսդի Ստեփան Բաբայեանին, որը իսկոյն մեռաւ, վիրաւորեցին նոյնական 18 տարեկան Գարեգին Ասլանիանին. սա էլ հասնելով տանը վախճանուեց. թեթև կերպով վիրաւորուեց գնդակով նոյն գիւղացի Գալուստ Գէրգեանը, որը բժշկուեց երկու ամսից յետոյ։ Սրանից յետոյ թուրքերը քշեցին տարան մարտիրոսցիների 1000 հատ ոչխար և 235 տաւար։ Այդ ժամանակ Մարտիրոսում կազակներ չկային, կային միայն Նախ-

ճաւան գաւառի Սէս գիւղում. կազակները չկարողացան հասնել իր ժամանակին օգնութեան, նոյնպէս օգնութեան չկարողացան հասնել մօտիկ հայ գիւղերի բնակիչները:

Մ. Տ.—Ա.

II

Համաձայն խմբագրութեանդ պահանջին, տալիս եմ հետեւալ տեղեկութիւնները Զանգեզուրու հայ-թուրքական ընդհարումների վերաբերեալ:

Նախճաւանի այս տարուայ արիւնալի դէպքերին մասնակցում էին Զանգեզուրու տեղական և քոչուոր թուրքերը, որոնք աւարից վերադառնում էին իրանց տեղերը և հրշաւոր գոյներով նկարագրում թուրքական բարբարոսութիւնները և ստացուած օգուտները, Նախճաւանի սահմանակից Սիսիան գաւառի հայերի ուժեղ լինելը փոքր ինչ զսպում էր տեղական թուրքերի վայրենի բնազդերը: Քոչուոր թուրքերը, որոնք գալիս են Շուշու և Բագուայ գաւառներից և ծածկում են Սիսիանի լեռները, Բազարչայ մալականի գիւղի ուղղութեամբ մինչև Դարալագեազի սահմանը և այդտեղից ամբողջ Մաղաւողը, Մինքեանդ գիւղի շրջակայքով մինչև Ալիդուլի, թուրով ոչ պակաս քան 40,000, արդէն մասնակցած Նախճաւանի և Դարալագեազի հայ-թուրքական ընդհարումներին, միշտ հակուած էին առիթներ որոնելու Զանգեզուրում քոչի ճանապարհի ուղղութեամբ յարձակումներ գործելու հայերի վրայ: Եւ ահա յունիսի 25—26-ին, Մուրթուզայի 15 հոգուց բաղկացած աւագակային խումբը յարձակում է Շաղատի և Մազրայի հովիւների վրայ, քշում 93 գոմէշ և 311 գառն: Սկսում է հրացանաձգութիւն, բոլոր քոչուորը միանում է աւագակային խմբին. Մազրի հայերը, 3 կազակի և 10 հոգի հայ քաջերի աշակցութեամբ փառաւոր ջարդ են տալիս ահազին քանակութեամբ թուրքերին շատ թեթև վնասով: Մազրու այդ ջարդը բոլորորովին սթափեցրեց թուրքերին և Սիսիանում մինչեւ վերջն էլ երկիւղ արին յարձակումներ կատարել. Քընդ հակառակն ըստնակոթցիք և այլ գիւղացիք համարձակ մտնում էին քոչի մ.ջ և Նախճաւանի հայերից խլած ապրանքները յետ խլում: Օգուտոսի 16-ին Մուրթուզայի նոյն խումբը քոչը անցկացնելուց յետոյ իւշ-թափում, Մազրու վրէժը հանելու դիտաւորութեամբ, սպանում են Սիսիանու 4 հայ յայտնի բէկերին: Նոյն օրերը Գորիսի մօտ հայերը սպանում են յայտնի թուրք բէկերի: 18-19-ին Մէնքեանդ գիւղի շրջակայ թիւրքերի մէջ երևում են